

ԿԻԼԻԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿՆԻՔՆԵՐ

1984 թվականին Միլանում հրատարակվեց «Վատիկանի գաղտնի արխիվների ոսկյա կնիքները» գիրքը, որտեղ նկարագրված են նաև Կիլիկյան թագավորության մի քանի կնիքներ, որ ուզում ենք ներկայացնել մեր ընթերցողներին:

ԿՆԻՔ 8Ա-Ի ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն կնիքը պատրաստված է պղնձափայլ ոսկուց. տրամագիծն է 37—38 մմ, հաստությունը՝ 6 մմ, կշռում է 15 գրամ:

Մասնակիորեն կնիքը տափակացած է և ունի ճաքեր: Դրոշմվածքի գրությունը մի երեսի վրա դժվար ընթեռնելի է: Կնիքը ներսից սնամեջ է, որովհետև այն իրենից ներկայացնում է երկու թիթեղ, որոնք ներսից միմյանց ագուցված են կսպանակավոր ճարմանդով: Կնիքն ունի մուտքի և ելքի անցքեր, որտեղից անցնում է լար: Իր մետաքսյա դեղին թելի հետ նաև նկատվում են վերականգնման հետևանքներ՝ ճերմակ բամբակի հետքեր:

Կնիքի շուրջը գրված է ԼԵԻՈՆ ԹԱԳԱ ԻՈՐ ՀԱՅՈՑ

Կնիքի վրա դրոշմված է մորուքավոր թագավորի պատկեր: Նա գլխին ունի թագ, որից կախված ծոփքավոր գնդերը կողքերից հասնում են մինչև նրա դեմքը: Թագավորը հանդիպահայաց բռնել է առյուծագլուխ գահին: Աջ ձեռքին նա բռնել է խաչանիշ մի գունդ, իսկ ձախին՝ շուշանատես գայիսոն է:

Կնիքի հակառակ կողմը—ԼԵԻՈՆ ՔՍԻ ԱՅ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(1205)—բարձրությունն է 84 մմ, լայնությունը՝ 187/184



Տևտոնական Օրդենի կրոնավորներից մեկի միջոցով Լևոն Բ թագավորը մշտապես կապ է պահպանել Հռոմի Պապ Ինոկենտիոս Գ-ի հետ: Սույն նամակն ուղղված է

Պապին: Լևոն Բ-ն Ինոկենտիոս Գ-ին հայտնում է, որ բավմիցս նրան ուղարկել է ընծաներ, սակայն վերջին ժամանակներում դրանք հափշտակվել են: Վերոհիշյալ նամակով նա նաև բացահայտում է Տրիպոլի դրքսության արարքները:

Լևոն Բ թագավորը միաժամանակ խընդրում է Պապին, որ Տաճարական Ասպետներին հրահանգ տա, որպեսզի չաջակցեն հիշյալ դքսությանը և վնաս չհասցնեն ոչ իրեն և ոչ թոռանը (Ռայմոնդ Ռուբենին—ծանոթագրությունը թարգմանչի):

ԿՆԻՔ 8Գ-Ի ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս կնիքը պատրաստված է փայլուն ոսկուց. տրամագիծն է 38 մմ, հաստությունը 5 մմ, կշռում է 15 գրամ:

Կնիքը լավ է պահպանված, թերևս դրա երկու կողմերում կան մեկական ճաք: Սա նույն բովանդակությունն ունի, ինչ 8Ա կնիքը: Այն կախված է կարմրադեղին մետաքսյա թելից: Չկան վերականգնման հետքեր:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(1205) — բարձրությունն է 193/190 մմ, լայնությունը 249/246:

Լևոն Բ թագավորի՝ Հռոմի Պապ Ինոկենտիոս Գ-ին ուղղված նամակի շարունակությունն է: Սույնով նա տեղեկացնում է Պապին, որ վերստին նվաճել է Անտիոքի դքսությունը և թախանձագին խնդրում է իր թագաժառանգ թոռանը հաստատի այդ դքսության գահին:

ԿՆԻՔ Դ-Ի ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սա նույնպես պատրաստված է 2-րդ կարգի դեղնափայլուն ոսկուց. տրամագիծն է 37—38 մմ, հաստությունը՝ 6 մմ, քաշն է 20 գրամ:

Այս կնիքը լավ է պահպանված, չունի ճաքեր: Սա նույնպես նույն բովանդակությունն ունի, ինչ 8Ա-ն:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(1207) — բարձրությունն է 353/336, լայնությունը 184/186: Ինոկենտիոս Պապին գրած Լևոն Բ թագավորի նամակի վերջաբանն է, ուր Լևոն Բ-ն դժգոհում է պապական դեսպաններից, որոնք գնում են Տրիպոլի դքսության մարդկանց: